

Երիտասարդական խորհրդի երկրորդ նիստում աշխատանքային խմբեր ձևավորվեցին

15.10.2018

Չոկտեմբերի 10-ին Կոտայքի մարզպետարանում տեղի ունեցավ մարզպետին առընթեր Երիտասարդական խորհրդի երկրորդ նիստը: Օրակարգում աշխատանքային խմբերի ձևավորման հարցն էր: Նիստին ներկա անդամների կողմից ստեղծվեցին տարբեր աշխատանքային խմբեր:

Խորհրդի քարտուղար Գևորգ Պետրոսյանի խոսքով, աշխատանքային խմբերն այսուհետ մշակելու են իրենց խմբին առնչվող ոլորտի վերաբերյալ ծրագրեր, այդ ծրագրերն առաջարկությամբ ներկայացնելու են Կոտայքի մարզպետին հետագայում իրագործելու համար: Առաջիկա հինգշաբթի օրը խմբերը պիտի ներկայացնեն առաջին ծրագրերը: